



ՏԻՊՐԱՆ ԱՎԵՏԻՍՅԱՆ

(ծննդյան 70-ամյակի առթիվ)

Արդեն 5-րդ տասնամյակը թևակոխած ՎՊՄԻ-ի տարեգրության մեջ կան անհատներ, ովքեր ինստիտուտի սկզբնավորման տարիներից մինչև այսօր անմնացորդ նվիրումով կերտում են նրա պատմության էջերը, ովքեր տասնամյակներ շարունակ անխոնջ մշակների նման ոչ միայն դասավանդման գործընթացով են զբաղված ու սերունդներ են կրթում, այլև ղեկավար պաշտոններ են վարում ու դասախոսներ կայացնում:

Այս առումով անուրանալի է Տիգրան Ավետիսյանի դերը ՎՊՄԻ-ում:

Նրա կենսագրությունը պարզ է (բայց ոչ պարզունակ), թափանցիկ (բայց ոչ առանց վայրիվերումների):

Ստավրականի վերընթաց ճանապարհ է անցել՝ առանց լուրջ ցնցումների, սակայն նույնը չես կարող ասել Տիգրան Ավետիսյան երեխայի, աշակերտի մասին:

Ծնվել է Զայրենական պատերազմից 2.5 ամիս առաջ՝ 1941թ. ապրիլի 6-ին Թբիլիսիում: Այդ թվականի հիշատակմամբ ամեն ինչ ասված է 40-ականների սերնդի մանկության դառնությունների, ընչազրկության, բազմաբնույթ տառապանքների մասին: Եթե սրան էլ ավելացնենք վթարից զոհված հոր անժամանակ կորուստը, ապա պարզ կդառնա, թե նման ճակատագրով երեխայի համար որքան հաղթահարելիք խոթեր կային Թբիլիսիի թիվ 79 դպրոցից մինչև Երևանի պետական համալսարանի ուսանողական աթոռը, իսկ դրանք արդեն հետպատերազմյան դեռևս չապաքինված տարիներն էին:

1948-1958թթ. Թբիլիսիում սովորում է հայկական թիվ 79 դպրոցում, բայց նա իր դասերը քաղում է ավելի շատ ուսուցչուհի մոր՝ տիկին Ամալյայի անսպառ գիտելիքներից, կենսափորձից ու մարդկային նկարագրից: Այսօր էլ նա խոնարհումով և պատկառանքով է խոսում այն ճիշտ դասերի մասին, որոնք տիկին Ամալյան տվել է իր երկու զավակներին թե՛ վաղամեռիկ ամուսնու, թե՛ իր փոխարեն:

1958թ. 17-ամյա Տ. Ավետիսյանն արդեն ԵրՊՀ-ի ուսանող էր: Նրա բանասի-

րական ճաշակի ձևավորման, գիտության այդ բնագավառի անդաստանուն չասվածը պեղելու և արժևորելու ու գիտության բարձունքները նվաճելու գործուն կարևոր դեր ունեցան նրա դասախոսները, հատկապես ակադեմիկոսներ Էդուարդ Աղայանը, Պևրոզ Զահուկյանը, Գուրգեն Սևակը, Էդուարդ Զրբաշյանը, Սկրտիչ Սկրյանը, Հրանտ Թամրազյանը, հետագայում՝ ասպիրանտական տարիներին ու դրանից հետո, ՊԱ Լեզվի ինստիտուտի մի ամբողջ ստեղծագործական կոլեկտիվ:

1963թ. երՊՀ-ն ավարտելուց հետո Ս. Ավետիսյանը զորակոչվում է խորհրդային բանակ՝ իր պարտքը հայրենիքի նկատմամբ կատարելու: Ջորաջովելուց անմիջապես հետո ընդունվում է ՀՍՍՀ ՊԱ Հր. Աճառյանի անվան Լեզվի ինստիտուտի ասպիրանտուրան և ուսմանը զուգահեռ Էդ. Աղայանի ղեկավարությամբ սկսում է աշխատել թեկնածուական ատենախոսության վրա:

Անցյալ դարի 60-ականների վերջերից մեկը մյուսի հետևից սկսեցին տպագրվել Ս. Ավետիսյանի առաջին գիտական հոդվածները. դրանք վերաբերում էին արդի հայերենի բառակազմությանը, բառի կառուցվածքի ուսումնասիրման նորագույն մեթոդներին, բառի ձևությամբ վերլուծության հարցին, տարբեր հոլովով կառույցների փոխակերպմանը ժամանակակից հայերենում, ածանցման ու խնդրառության փոխկախվածությանը:

Այս հարցերի քննությամբ էլ ձևավորվեց թեկնածուական ատենախոսությունը՝ «Ժամանակակից հայերենի բառի կառուցվածքը», որը հաջողությամբ պաշտպանեց 1970թ.:

Տիգրան Ավետիսյանն այդպես էլ չփոխեց իր նախասիրությունը, ավելի խորացավ բառի բազմապլանային քննության մեջ ու գնալով ավելի նեղացրեց ու խորացրեց իր ուսումնասիրման ոլորտը, այն է՝ հատկանվանագիտությունը:

Ծիշտ է նրանից առաջ շատերն էին զբաղվել հատուկ անունների քննությամբ, Հրաչյա Աճառյանը հինգ հատորով տպագրել էր հարց անձնանունների բառարանը՝ անհրաժեշտ տեղեկատվությամբ ու ստուգաբանությամբ, սակայն Ս. Ավետիսյանը մի նոր աստիճանի բարձրացրեց այս հարցի քննությունը՝ հատկապես ուշադրություն դարձնելով *հայերի* անվանման միտումներին խորհրդային շրջանում, հայոց անվանման բանաձևերին, հայկական ազգանունների ընդհանուր բնութագրին, դրանց ձևավորմանը, կառուցվածքին, վերլուծությանը, հայկական պատմական անձնանվանագիտությանը, հայկական մականվանական ազգանուններին, պատմական անունների մշակույթի հուշարձաններին, ոչ անձնանուն և բուն մականուն ազգանվանական հիմքերին, հայկական անձնանունների քրիստոնեական շերտին, նորահայտ ազգանուններին, հայկական տոհմանվան բառակազմական քննությանը, մականուն տոհմանվանական հիմքերի իմաստաբանությանը:

Տիգրան Ավետիսյանն այս բնագավառում կատարել է մի շարք կարևոր դասակարգումներ. այսպես՝ հայկական ազգանվանակերտ հիմքերի ծագումնաբանական դասակարգում, դրանց հիմքերի իմաստային դասակարգում, ազգանվանակերտ անձնանուն հիմքերի ժամանակագրական դասակարգում, ազգանվան հիմքերի կառուցվածքային քննություն, այդ թվում՝ ոչ անձնանուն ազգանվանական հիմքեր և այլն, և այլն:

1988թ. վեր նշված ուսումնասիրությունների արդյունքում ծնվում է նրա 2-րդատենախոսությունը՝ «Հայկական մարդանվանական համակարգը», որը հաջողությամբ պաշտպանում է ԳԱ լեզվի ինստիտուտում:

Հայկանվանագիտության բնագավառում կատարած նրա աշխատանքի բարձրագույն նվաճումներից մեկն էլ «Հայոց ազգանունների բառարանն է», որը 2001թ. արժանացել է ՀՀ նախագահի մրցանակին:

Տ. Ավետիսյանի գիտական ձեռքբերումների գործնականում կիրառվող ներդրումներից է ՁԱԳՍ-երին հանձնարարվող հայկական անձնանունների նոր ճշգրտված ցանկերի տրամադրումը տերմինաբանական կոմիտեի տեղեկագրի միջոցով (1979-1984թթ.), նրա միջոցով նախկին ԽՍՀՄ-ի ժողովուրդների հատուկ անունների բառարան տեղեկատուում ընդգրկվել են նաև հայկական հատուկ անունները:

Իր ուսումնասիրած ոլորտը Տ. Ավետիսյանն առանձին հոդվածներով ներկայացրել է այլ գիտաճյուղերի համատեքստում:

Այսպես՝ «Հատուկ անուն և ժողովրդական մշակույթ», «Քրիստոնեությունը և հայկական անունարանը», «Անվանագիտություն և լեզվաբանություն», «Հայկական անձնանունների քրիստոնեական շերտը», «Գենդերային դրսևորումը հայ անվանագիտական համակարգում»:

Այժմ Տ. Ավետիսյանը ղեկավարում է հայոց լեզվի ամբիոնի ստանձնած «Զթեքվող խոսքի մասերը հայերենում» ուսումնական ձեռնարկի (2010-2015թթ.) աշխատանքները, ինչպես նաև տպագրության է նախապատրաստում ռուս-հայերեն բառակապակցությունների բառարանը:

Միշտ չէ, որ համատեղվում են բեղմնավոր գիտնականի և բարձրակարգ դասախոսի մարդկային որակները:

Տ. Ավետիսյանն այս առումով էլ եզակիներից է, նրա դասախոսությունների հագեցվածությունը, լեզվական բարձր ու անկաշկանդ արվեստը, բառի միշտ տեղին ու ճաշակով գործածությունը, հումորի ինքնատիպ դրսևորումը մի յուրօրինակ հմայք են տալիս նրա դասախոսություններին: Վկա՝ նրա 40 տարիների ուսանողների արծագանքները՝ «Դասախոսը ուսանողի աչքերով» խորագրով հարցումների գնահատականները:

Տ. Ավետիսյանը հայոց լեզվի ամբիոնում աշխատում է 1970թ.-ից: Արդեն 40-ից

ավելի տարիներ մեր ինստիտուտում նա է վարում «Լեզվաբանության ներածություն», «Ընդհանուր լեզվաբանություն» գիտաճյուղերը, միաժամանակ վարել է հատուկ դասընթացներ և հայոց լեզվի տեսության տարբեր բաժիններ բանասիրական և մանկավարժության ֆակուլտետների տարբեր բաժիններում:

Անուրանալի է Ս. Ավետիսյանի վաստակը հայոց լեզվի ամբիոնի դասախոսական կադրերի՝ իբրև դասախոս կայանալու, գիտական աստիճանների ու կոչումների ձեռք բերելու դժվարին ճանապարհին:

Նրա ղեկավարած ամբիոնի բոլոր դասախոսներն ատենախոսությունները պաշտպանել ենք նրա ամենօրյա քաջալերմամբ ու բարոյական աջակցությամբ:

Տիգրան Ավետիսյանը որքան ավանդապաշտ, այնքան էլ ժամանակակից կենսածնով ապրող մի լուրջ համակազմով գերդաստանի նահապետ է: Ընտանիքի բոլոր անդամների (չհաշված անչափահասները) դիպլոմները կրում են Երևանի պետական համալսարանի կնիքը: Այդ ընտանիքում պաշտամունք կա մայր բուհի, առհասարակ կրթության, գիտության նկատմամբ:

Արդեն 45 տարի Ս. Ավետիսյանի կողքին է նրա համակրելի ու համեստ տիկինը՝ Լուսիկ Ստեփանյանը, ով Ավետիսյան գերդաստանին ու հայ ժողովրդին պարզևեղ է երեք փառահեղ տղաներ՝ Արա, Վարդան ու Կարեն: Տիկին Լուսիկի կողքին ընտանեկան հոգսերը կիսել ու երրորդ սերնդի դաստիարակության գործին են մվիրվել երեք խոհեմ հարսներ՝ Անուշ, Իրինա, Լիլիթ, ովքեր այդ ընտանիքին պարզևեղ են 7 հրաշք բալիկներ՝ Տիգրան կրտսեր, Մուշեղ կրտսեր, Լուսինե, Դավիթ կրտսեր, Ամիլեն (որն իր տատիկի՝ Ամալյայի անվան հայկականացված տարբերակն է կրում), Վահան, Սիեր:

Տիգրան Ավետիսյանը հոգու թելերով կապված է իր ընտանիքի բոլոր անդամների հետ, հպարտանում է նրանցով և դողում նրանցից յուրաքանչյուրի կյանքի համար:

Տիգրան Ավետիսյանի 70-ամյակին եկել են նրա ամենամոտ մարդիկ, ովքեր ուղեկցել են նրան կյանքի ուրախ ու դժվարին պահերին, և պատահական չէ, որ նա ինքն է ընտրել, թե ում հետ պետք է նշի իր հոբելյանը, ուստի եկեք այսօր բուլրս միասին շնորհավորենք նրան, ցանկանանք երկարակեցություն ու մաղթենք, որ նա լիարժեք վայելի իր բոլոր ձեռքբերումները թե՛ անձնական, թե՛ գիտական ու հասարակական կյանքում: